ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 01-67

«27» ա պ ր ի լ ի 2021թ .

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետ պարոն՝

Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի << Ոսկեհատ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N31-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 10-Ն որոշմը:

Առդիր 59 թերթ

Հարգանքով՝

համայնքի ղեկավար Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ
Մուտք թիվ 1-08976-2021
27 04 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

<<-26-->> -----04------ 2021թ. *N 10 -Ն*

Ոսկեհատ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայանքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի<< Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին >> N31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները համաձայն հավելվածի՝
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Գյոզալյան Արմեն
2. Գալստյան Մայիս
3. Դիշլանյան Սերոբ
4. Խուդաբաշյան Արմեն
5. Հակոբյան Ռաֆիկ
6. Տեր_Խաչատրյան Նիկոլայ
7. Օհանյան Նորայր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ*

2021 թվականի 26 ի ապրիլի
Ոսկեհատ համայնք

Հավելված

Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք

1. Համայնքի բյուջեի եկամուտները ավելացնել 13402,2 հազար դրամով՝ այդ թվում
1) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) 13402,2հազար դրամ

2,Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ վարչական բյուջե 35958,5 հազար դրամ, ֆոնդային բյուջե՝ 22134,2 հազար դրամ: Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 35958,5 հազար դրամը ենթակա է ուղղման ֆոնդային բյուջե: Ընդամենը ֆոնդային բյուջե՝ 58092,7 հազար դրամ:

Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման

Անվանումը	2021թ.
1.Օրենսդիր և գործադիր մարմին	23282.7
2.Ընդհանուր բնույթի հանրային ծառ.	48212.2
Ընդամենը	71494.9

Համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման

Անվանումը	հոդված	2021թ.
1.Շենքերի և շինություններ շինարարություն	5112	44712.2
2.Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում	5113	1000.0
3.Տրանսպարտային սարքավորմներ	5121	12000.0
4. Վարչական սարքավորմներ	5122	11282.7
5.Նախագծահետազոտական ծախսեր	5134	2500
Ընդամենը		71494.9

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ N 10-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N31-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին մշակվել է 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա: Բյուջեում կատարվող փոփոխությունները պլանավորված են նպաստելու համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, վարչական և ֆոնդային բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդի հաստատմանը: Որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են.

Համայնքը մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրին, որի արդյունքում համայնքում կառուցվում է հանդիսությունների սրահ, որը կնպաստի համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Նախատեսվում է նաև հայմայնքապետարանի կարիքների համար վարչական սարքավորումների և տրանսպորտային միջոցի ձեռք բերում, կապիտալ վերանորագման աշխատանքներ և նախագծանախահաշվային ծախսեր:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N31-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Համայնքի ղեկավար Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ /27.3/9917-2021

«20» ապրիլի 2021թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ներսիսյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 01-56 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

4/20/2021

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-116

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես՝ «ԱՎԱԳԱՆՈՒ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ԱՎԱԳԱՆԻ», իսկ «ՈՐՈՇՄԱՆ» բառը՝ «ՈՐՈՇՈՒՄ» բառով:

2. Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ», իսկ 1-ին կետում՝ «հետևյալ փոփոխությունները և լրացումները» բառերն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսվում են միայն փոփոխություններ:

3. Նախագծի Հավելվածի գլխագիրը նշված չէ:

4. Հավելվածի կետերի համարակալումը վերանայման կարիք ունի:

5. Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված Նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող Նախագծի հավելվածների տեսքով: Հիշյալ

դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով նախագծի Հավելվածի բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ սահմանող դրույթներն անհրաժեշտ է նախատեսել Նախագծի հավելված հանդիսացող աղյուսակի տեսքով:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

4/20/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ